

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈ ՀԱՆՁՆԱԽՄԲԻՆ

Բուենոս Այրես

Աստուծո ողորմությամբ Մեր ուղևորությունից բարեհաջող վերադարձանք Մայր Աթոռ անմոռանալի հուշերով ձեր ափերից, ուր մեր ժողովրդի ծոցում ապրեցինք հոգևոր խոր հուզումների, ներշնչանքների և ազգային հպարտության պահեր:

Հայրական սիրով հղում ենք ձեզ Մեր սրտագին գնահատանքը և շնորհակալությունը ձեր շատ ջերմ և ուշադիր ընդունելության համար՝ անթերի և բարձր մակարդակով կազմակերպված:

Ձեր միջոցով նույն սիրով Մեր խորագույգ գոհունակությունն ենք հայտնում համայնքիդ բոլոր եկեղեցիների հոգաբարձությանց, «Արսլանյան», «Խրիմյան», «Բարեգործական» և «Մխիթարյան» կրթական հաստատությանց և բոլոր մշակութային և հայրենասիրական միությանց, որոնց անձամբ Մեր օրհնությունները բաշխելու երջանկությունը ունեցանք:

Թող Տերը միշտ հաստատ և ծաղկյալ պահպանի արգենտինահայ մեր հավատացյալ ժողովրդին՝ իր աղոթքի Տներով, իր կրթական և մշակութային հաստատություններով:

Սուրբ Էջմիածնից և Մեր սրտից վերստին բյուր օրհնություն բոլորիդ, բոլորիդ:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով»:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
22 հունիսի 1984 թ.

•
• •

Ամենայն Հայոց Հայրապետի կողմից հանանման բովանդակությամբ հեռագրեր են հղվել նաև Բրազիլիայի և Ուրուգվայի հայոց թեմերի եկեղեցական վարչություններին և ընդունելության հանձնախմբերին: